

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տիտ թագմ. 1924, էջ 92)

ԿԳ.

Կը հրատարակենք հետեւեալ նամակը՝ ինքն իր մէջ նորութիւն մը պարունակելուն համար յանձին Մեծ Սերաստացւոյն:

Գևորգյարգեցիոյ Տիտոն Տիտոն հօր մկրտմ Արարչի

Յայտ լիցի գի ի դեկտեմբերի 2-ին Ա քաղաքից և խաւարամած լուր իմն լուայ որ բոլորովին անձամբս յուշաթափեալ անկայ ի գետնի, ծաւալեալ աստեանդ իբրև զխելաթափ, մինչ գի հագիւ յետ ժամ և կիսոյ շուր սրկեալ յերես իմ խելաբերեցայ որպէս զանասուն իմն. և այնպէս որ նորագոյն հիւանդութենէ ելեալ էի զտկարութիւն զարձ եկեալ պատեաց զիս, և ոչ զիտեմն զվերջն թէ որպէս դիպելոց է վասն իմ, մինչև տէր տացէ գի լուեալ զառողջութենէ Աբբահօրն մերոյ քաղցրագունեղի, զարձցի սուգ իմ ի յուրախութիւնս Այսպէս եղև դիպումքն, գի ի գոյսովայու բարգուղիմէս վարդապետն ի սիպին հանդիպեալ Ա ճիզվիդ պատրի, ասացեալ լինի իւրն թէ լուայ յումենէ կարգաւորէ, որ վէնէտիկ եղեալ սուրբ զազարու վանքին Աբբահայրն առ Աստուած փոխեցեալ է: Եւ լուեալ զայս ի նմանէ Բարդղղիմէս վ.ն գրեալ էր աստ եղեալ Մ. վ.ին խնկանոսեանին. և նա բերեալ զգիրն ընթերցաւ առաջի իմ. վասն որոյ վերոյգրեալ պատահումս հանդիպեցաւ ինձ. վասն որոյ աստուծոյ սիրոյն և քրիստոսի արեան գնոջն փութասշխիք գրել Ա մատգիր թէ այս լուրս արդեօք որպիսի իցէ, գի բաւական է ինձ ցաւն իմ որ կրեցի, լինի թէ ձեր սուրբ ազօթիքն մի նիասիցիմ տկարութեամբս....

Պատրաստական ծառայ

Հ. Մ[անուէլ] Աբեղայ

Յամի ֆրկչին 1735

դեկտեմբերի 8

ԿԴ.

Երուսաղեմի Ս. Յակոբայ կնճոռտ խնդրով կը զբաղի դարձեալ Հ. Պօղոս վարդապետ, տալով նոր մանրամասնութիւններ:

Մի և նոյն նիւթին շուրջ կը գտնենք հակիրճ ծանօթութիւն մ'ալ Թովմաս վ. Սերաստացւոյ մէկ անտիպ թուղթին մէջ (1735 դեկտ. 25). « Թունաց ազգն — կ'ըսէ « նա — մեծաւ հանդիսիւ էել յատեան թագաւորին տաճկաց առ ի խնդրել զսուրբ

« յակորն երուսաղեմի, թէ իւր հղեալ իցէր ի վաղուց ժամանակաց ի ձեռն հնազունի
« եղելոյ հէտտիշէրիֆի. և է Բ ոք վասն այսորիկ ի նեղն եկեալ դիմեցին առ զես-
« պանն սպիտակ լաթին զի օգնիցէ նոցա. այլ նա արտաքսեալ յերեսաց իւրոց
« ասաց. Այժմ պիտոյ եղէ ձեզ որք յառաջագոյն հպերեցիք զխրատա իմ » (Գր. 1735, Դեկտ. 25):

Գերայտրգեցիոյ տեսան տեսան Մխիթարայ Արքայի Հօր մերոյ

Յիսուսաւանդ ողջունիւ և բազմաւ յարգութեամբ յայտ լիցի, զի նախ քան զայս
զիրս գրեցի զբանէ երուսաղէմայ ըստ որում լուայ յայնժամ, բայց այժմ այլապէս եղև
բանն, քան[զի] յոյնք 500 քսակ տուեալք են մատնւոյն, նաև խորհրդով նորա իբրև
4000 յոյնք գնացեալք արգուհալ տուեալք են թագաւորին, և զամենայն դրուես մեծաւո-
րաց ի կողմն իւրեանց դարձուցեալք են, և հայոց զամենայն կողմն ի ծով դարձուցեալք
են. այլ և զսեղբոսն և նորա զեղբայրն ի բանտ արկեալ է մատնին, որպէս զի մի նոքա
ի դրուես դատաւորաց գնալով աւերիցեն զբանն յունաց, և ևս մատնին ի ձեռաց հայոց
առեալ ի յինքն պահեալ է զայն հաթաի չերիֆն, զոր առեալք էին ի յայս թագաւորէն ի
ժամանակի փոխեցեալ մատնւոյն ձեռամբ սեղբոսին, և ասեն թէ անհնարին է յոյք թէ
յոյ[ն]քն չառնուցուն ի ձեռաց հայոց զայն հապէշին տեղն, զորոյ հայքն հաթաի չերիֆ
ի յանցեալ ամի առին յայսմանէ թագաւորէ: Եւ հայքն մինչ անկան յայսմիկ նեղութեան՝
դիմեցին առ յեսպանն Ֆրանզըզու, և նա ոչ կանխեցաւ նոցա տէր: Եւ երևի, թէ ի
յերկուց կողմանց ևս բազումք և բազումք քսակք մտանեն ի զանձարան անհաւատից:...

Նուստատագունեղ ծառայ

ս. տ. տ. Հ. Պօղոս վարդապետ

յամի տեսան 1735 և դեկ. 23

[Կ. Պօլիս]

ԿԵ.

Կարեւորագոյն վաւերագրերու մէջ դասելի անտիպ թուղթ մ'է որ կը ներկայանայ
հետեւեալը: Ո՛չ մէկ տեղ յիշատակութիւն չկրցանք գտնել այդ հայ կուսանին, այսինքն
« Էջիգ Մարիամո քաղաքաւ եկկիւրկցոյ » և անոր կենսագրութեան մասին: Անտեղեակ
կը թուին հրատարակուած կենսագրութիւններ սուրբերու և այլ երևելի անձանց-
րառ մ'իսկ չենք գտներ Հ. Ալիշանի գործոց մէջն ալ:

Հետաքրքրաշարժ թուղթիս ճակատը գրուած է. « Ի ձեռն տեսան մերոյ տմե-
նապատիւ Մխիթարայ աբբայի ձօնեցի աստուծով »:

Օրինակ քարտէզին գրեցելոյն ի քաղաքն էս, որ է զլիւսաւորն բուզէնցայու յուլիսի 25,
1735 [1736?], ի յազուական տեսանէ սարոն առնայու առ մարթգի այսինքն գերագանցագունեղ
թագաւորիկ վիլլանովայու դեսպանի քրիստոնէագունեղ արքային կալլիացոց ի դուռն օսմանցոց:

Գերազանցագունեղ տէր իմ իլխան

Ձի որպէս եղև ինձ ունիլ զգործառնութիւն ի յոմանց արարիցն հայ էջիգ մարկամու
քաղաքաւ Լնկուրիցոյ, որ է զլիւսաւորն գաղատիոյ, պարտական վարկայ զիս համառո-
տաբար գրել զայսցանէ զոր ինչ եղեն գերագանցութեան ձերոյ, որ էք պատճառ և հեղինակ
սոցայ: 1734 սեկտեմբերի ամսոյն եմուտ այս աղլիկս ի վանքն սրբոյն օստալայու, նորում

գերազանցութիւնն ձեր ունի գոյոյրս և զգտեմքս: Սա նսկաբան մտանելոյն իւր կրեաց գրագում ննդութիւնս մինչ ոչ ունէր գոք, զի խոստովանիցէր նմա զմեզս իւրս վասն պակասութեան լեզուին, զի ոչ գիտէր զլեզու: Էս ինքեին եղէ սմա թարգմանիչ առ ոտս վերապատուեցեալ հօրն պօլթիէր, որ է յիսուսեան կարգէն. մինչև ցայն ժամանակն, նորում եղև կարօղ մեկնել ինքն յինքենէ: Կրօնաւորութիւնն նոյնոյ վանից աղայեցին զիս օգնել, և ընկերակցել նմա մինչև ուսանիցէր զլեզուն: Մէկ տարի սա կրթեաց զինքն, և ուսաւ զամենայն ընդ զարմացմամբ բովանդակ վանիցին: Պարոնտէր արհի եպիսկոպոսն, ոչ գիտեմ վասն ոյր պատճառաց օրէ օր ձգեաց, և երկարեաց զմիթթարելն զնայ: Առնէր զգոհարութիւն ևս վասն խորհրդոյն զըռմի, մինչ աղիկն հաստատէր թէ առեալ իցէ զնայ անմիջապէս յետ սուրբ մկրտութեանն: Ժամանեաց աստ ի քաղաքս եպիսկոպոսն վիճելոսին: Խօսեցաւ ընդ մեր արհի եպիսկոպոսին, զի հաճեցի միւրթարել զմանկունին, զորս համընկերակցութեամբ ընդ տիկին մատամային պակասվուլթ, որ է քոյր եպիսկոպոսին ետ բերել զնայ ի պալատն իւր, ուր համայնից հարցաքննութեանցն աղչիկն պալատախանեաց ամենայնիւ համարակութեամբ և արագութեամբ: Յայնժամ եպիսկոպոսն խոստացաւ նմայ թէ ի մերձակայ ժամանակին կատարեցեալ լինելոց է խնդրուածքն նորին: Որպէս եղև իսկ և կատարեցաւ: Մինչ ի 14 մայիսի թվին փրկին 1735 մտաւ ի փորձութիւնն կրօնաւորական հաճութեամբ և զուարճութեամբ բովանդակ վանից միաբանիցն: Մինչ վերջացաւ փորձութիւնն կրօնաւորական եղև լիապէս հաւանութեամբ ընդունեցեալ ի կարգս քերցն: Իսկ ի 12 յուլիսի 1736 եղև ի գործածեցեալ արարողութիւն ի յեպիսկոպոսէն վիճելոսին հայրապետական զգեստին: Եւ քանզի կամեցան կրօնաւորութիւն զի լինիցիւր ցուցակութիւն սորայ արեւելականիւ զգեստիւ, սակս որոյ զուրկապէս յղեցին ի վանից զգեստս ոսկեղէնս, զակունս, զմարգարիտս, և այնքան լիապէս զարդարեցեալ էր, մինչ զի թուէր որպէս զմի թագունի: Արարողութիւնն եղև ամենամեծ փառաւորութեամբ: Ոչ կարէին ընթանալ ի քաղաքումն ի բազմութենէն մարդկանց, որք զային ի տեսանել զարարողութիւնս զայս. ոչ լսիւր այլ ինչ եթէ ոչ օրհնութիւնք վասն գերազանցութեան ձերոյ սակս մանկունոյն: Արար ոմն գերապատիւ հայր յիսուսեան կարգէն զներբողեանն, որով մեծապէս վերաբարձրացոյց զթութիւնն և զպաշտպանութիւնն գերազանցութեան ձերոյ, զորս առնէ ազգին հայոց, ի յերկիրն օսմանցոց: Հախախնամութիւնն առածեաց զմանկունիս զայս առ ճշմարիտ նաւահան, զիստն: Նոյն նախախնամութիւնն պատճառեաց և ետ գերազանցութեան ձերոյ զմի մեծ բարեխօսիչ: Հիմարտապէս զարմանալի իմն է տեսանելն զնորատունկս զայս ընձիւղեալ և վերաբուսեալ յարմար առ ամենայն գործս և ի կրթութիւնս հաստարակութեան միաբանիցն, այնքան վասն վանքին, որքան վասն եկեղեցւոյն: Սա ի կարգն շաբաթական առնէ զպաշտօնն: Սա երգէ որպէս իսկապէս զմի կալիւրացի: Եւ հասարակօրէն կոչեցեալ է սուրբ ոմն:

ԿԶ.

Պէտք է ըսենք, որ մի և նոյն հայ կուսանով զբաղող հետեւեալ շահեկան թուղթը ուղղակի լուսարանութիւն մ'է նախընթաց կարեւոր վաւերագրոյն:

Պիկնետպատուեցեալոյ և ի որսի սիրեցելոյ տեսաւ մերոյ Միխիլայոյ ստառածախսուն, ըսան վարդապետի, և արքայ հօր ձօնեցի ողջոյն սիրարկական թագմաւ խոնարհութեամբ և ցրկախառն համբուրիչ:

... Ընդ սմին և յայտարարութիւն լիցի թէ քանի մի տարի եղև, որ եկն աստ ի գաղատիոյ էնկուրիէն կոյս ոմն էգիզ կոչեցեալ, և մինչ ժամանակ ինչ եկաց աստ, մեր գերազանցագունեղ զեսպանն քրիստոնէագունեղ արքային յղեաց զնա ի յերկիրն իւր

առ կալիլայ ի վանքն կուսանաց: Յետ այսորիկ մինչ ես առնէի ըստ վաղեմի սովորու-
թեան իմոյ երթ[ն]եկցութիւն առ այս գերազանցագունեղ ղեսպանս, նայ բազմիցս վիպէր
ուրախօրէն զլուրս նորին, և զքարտէզս որք գային ի նմանէ ցուցանէր գովաբանելով:
Բայց մերձակա[յ] ժամանակիս յաւուր միում մինչ եղէ առ այս գերազանցագունեղս, նա
եցոյց, և ընթերցաւ առաջի իմ զքարտէզ իմն յոյժ երկար, որ պարունակէր զպատմու-
թիւնն այն էղիգին: Արպէս տեսանելոց էք զհամառութիւնն նորին ընդ այսմիկ, զորս
զրեալ էր ո՞նի ազնուական կալիլացի առ ղեսպանն, զորս հրամայեաց ինձ թարգմանել
զնա, և ուղարկել առ Լնկուրի ծնողի, և ազգականաց էղիգին: Իսկ մեք մին չընդ
ղեսպանին էաք նայսմիկ զլուրթեան՝ եկն ո՞նի վախատիկի ծանօթ նոյնոյ ղեսպանին,
և վաղեմի բարեկամ իմ: Սա յորդորեաց զիս, զի ուղարկիցէի ևս զմինն ի յօրինակացն
պատմութեան մեծութեան ձերոյ, և ես խոստացայ առաջի ղեսպանին առնել յօժարօրէն:
Վասն որոյ զմինն ի յօրինակաց եղի նայսմիկ քարտիգի, զի ընթեռնելով զայս տեսանիցէք
թէ այս գերազանցագունեղս մեր որքան բարութեանց պատճառ եղև այսմիկ աղչական:
Հիտրէ արա՛ ծանուցանել մեզ զծամանելն սոցայ ընդ որպիսութեանց ձերոց, զորս բազմամ
իմանալ, քանզի սիրեմ ճշմարտութեամբ: Եղբայրն ձեր տիրացու Յովսէփն վաղուց տեղս
է: Եւ մերձակայ աւուրս եկն ի սեփաստիոյ տիրացու պապ աղան քովի որդին ձեր, որք
ողջունեն զձեզ մեծաւ խոնարհութեամբ և սիրով, և համբուրեն զօրբասնեալ աջն ձեր...:

Պատրաստական և շիրմեռանդ ծառայ

Մինաս վարդապետ

միսսթօնար առաքելական

Պէչ Օղլուն Բուզնդիդոյ

1737 Ապրիլի 16

ԿԷ.

Պատառիկ մը ահա ()սմանեան պատմութենէն: Միջնորդութիւն կատարողն է
Գերմանացոց թալման ղեսպանը:

... Ի կողմանէ պատերազմին ի մէջ մեծ պահուց լուաք աստ, զի ի պալատն ար-
քունի տուայ և սէնէ եղեալ է վասն հաշտելոյ ընդ մուշտակին, և այս միջնորդութեամբ
նեմցէ էլլուին: Եւ պատճառ զլիաւորական տաճկաց ընդ մուշտակին հաշտեցութեան ասեն
կամեցող զոլ սպիտակ լաթն այնու, զի ինքն գհաշտութիւն իւր ընդ նէմցէու ընդ թէու-
թեան հաշտութեան տաճկաց ընդ մուշտակին եղեալ իցէ. այսինքն եթէ նեմցէն հաշտե-
ցուցանիցէ զսոսա ընդ մուշտակին և ինքն ընդ նեմցէու հաշտեալ է. ապա թէ ոչ ևս
ինքն չէ հաշտեալ ընդ նմա: Բայց թէ տաճկուք և թէ մուշտակքն ամենայն պատրաս-
տութեամբ ի տեղի պատերազմի գտանելոցք են, և հրեշտակքն, թէ նեմցէու, թէ ինկիլիզու
և թէ Ֆիլէմէնի զվէճ նոցին կտրելոցք են: Եւ յետ զատկին լուաք, զի զատկի հետեալ
հինկաթիին ասացեալ հրեշտակքն ելեալք են յօրոյնոյ գնացեալք են ի կողմն լէհու՝ առ
ի խօսակցիլ ընդ սպարապետին մուշտակու: Վասն մտակրին ասացին՝ զի գնացեալ ի
յախն և բերեալ է զբազում գերիս. նա և գնացեալ է այլ ո՞նի ոչ դադարխան. և նորա
յետս մինչև ցայժմ ոչ են եկեալք...:

Գերարգութեան ձերում

յամի տեառն 1737 և յապրիլի 30

Նուաստագունեղ ծառայ

ս. տ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Հ. ՂԵՌՈՒՄ ՏՈՅՈՒՆ

Շարունակելի